ՄԱՏԵՆԱՇԱՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ԿԵՍԴԱՐՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ

«Հայաստան» հրատարակչությունը լույս ընծայեց ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակին նվիրված 16 գրքույկներից բաղկացած մատենաշար, որը պարունակում է ՍՍՀՄ և միութենական 15 հանրապետություններին նվիրված հարուստ տեղեկատու նյութեր։

Առաջին գրքույկը վերաբերում է մեր մեծ Հայրենիքին՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությանը, որտեղ համոզիչ փաստերով ցույց է տրված, որ ՍՍՀՄ-ի՝ որպես մեկ միասնական բազմազգ սոցիալիստական տերության ստեղծումը պատմականորեն անհրաժեշտ պայման հանդիսացավ Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ դասակարգային ու ազգային ճնշումից ազատագրված ժողովուրդների նոր կյանքի կառուցման համար և ծառայեց ինչպես ամբողջ պետության, այնպես էլ նրա կազմի մեջ մտնող յուրաքանչյուր հանրապետության տնտեսական աննախընթաց զարգացման, պաշտպանական հզորության ամրապնդման գործին։

Գրքույկներում ցույց են տրված ՍՍՀՄ վարչա-տերիտորիալ կազմի ձևավորման փուլերը, որոնք արտացոլում են լենինյան ազգային իմաստուն քաղաքականության հետևողական կենսագործումը։ Սկզբնապես ՍՍՀՄ կազմում միավորված չորս հանրապետությունների՝ ՌՍՖՍՀ, Ուկրաինական ՍՍՀ, Բելոռուսական ՍՍՀ և Անդրկովկասյան ՍՖՍՀ կազմավորմանը հետագայում հաջորդեց Ուզբեկական, Թուրքմենական, Կիրգիզական, Տաջիկական, Ղազախական ՍՍՀ-ների, Անդրկովկասյան ֆեդերացիայի փոխարեն Ադրբեջանական, Հայկական և Վրացական ՍՍՀ-ների, ապա նաև՝ Մոլդավական ՍՍՀ-ի կազմավորումը, ինչպես նաև մերձբալթյան ժողովուրդների սովետական պետականության վերականգնումը և Լատվիական, Լիտվական և Էստոնական Սովետական Սոցիալիստական հանրապետությունների ինքնակամ մուտքը ՍՍՀՄ կազմի մեջ։

Սոցիալիստական հեղափոխության շնորհիվ վերածնված ազգերի քաղաքական զարգացումը իր արտահայտությունը գտավ նաև միութենական հանրապետությունների ներսում 20 ինքնավար հանրապետության, 8 ինքնավար մարզի և 10 ազգային օկրուգների կազմավորման մեջ։

Մեկ պետության մեջ միավորված ժողովուրդների այնպիսի կուռ միասնությունը, ինչպիսին գոյություն ունի ՍՍՀՄ-ում, միանգամայն նոր երևույթ է, «Համաշխարհային պատմությունը տասնյակ ազգերի ու ազգությունների փոխհարաբերությունների մեջ գեռ չէր տեսել շահերի, նպատակների, կամքի ու գործողությունների այդքան անխախտ միասնություն, այդպիսի հոգեհարազատություն, վստահություն ու փոխադարձ հոգացություն, որպիսիք շարունակ գրսևորվում են մեր եղբայրական միության մեջ,— ասված է ՍՄԿԿ Կենտկոմի «ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի նախապատրաստման մասին» որոշման մեջ։ Գրքույկները պատմում են Հայրենական մեծ պատերազմի ժամանակ միմյանց թև ու թիկունք դարձած մեր երկրի բոլոր ժողովուրդների անձնուրաց սխրագործությունների ու համատեղ ձեռք բերած մեծ հաղթանակի, տնտեսական շինարարության բոլոր բնագավառներում միմյանց ցույց տրվող անշահախնդիր օգնության, համաժողովրդական վիթխարի կառույցներում տարբեր ազգերի ներկայացուցիչների աշխատանքային հերոսապատումների, գիտության և մշակույթի բնագավառներում ինտերնացիոնալ փոխօգնության և այլնի մասին։

Հոբելյանական մատենաշարը պատկերացում է տալիս երկրում արտադրության համաչափ տեղաբաշխման լենինյան սկզբունքների իրականացման մասին, որը տեղի է ունենում պլանաչափ, գիտական հիմունքներով, թույլ է տալիս առավել արդյունավետ օգտագործել բնական հարստությունները, ամենակարճ ժամկետներում ստեղծել և զարգացնել արդյունաբերական և գյուղատնտեսական նոր կենտրոններ, յուրացնել նոր շրջաններ, բարձրացնել բնակչության բարեկեցությունը։

Զգալի ուշադրություն է նվիրված բնակչության կենցաղի, ազգային առանձնահատկությունների, ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական մշակույթի վիթխարի աճին։

Մատենաշարն ունի միասնական կառուցվածք. գրքույկներում բնութագրվում են հանրապետությունների աշխարհագրական գիրքը, բնական պայմանները, ռեսուրսները, ժողովրդի պատմական անցյալը, տնտեսության հիմնական ճյուղերը, դրանց զարգացման ժամանակակից մակարդակը և հեռանկարները։ Առանձին բաժիններ են նվիրված հանրապետությունների միջև զարգացող մշակութային և տնտեսական համագործակցությանը։

Մատենաշարի ընդհանուր խմբագիրն է աշխարհագրական գիտությունների դոկտոր Լ. Հ. Վալեսյանը, գրքույկների հեղինակներն են ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ա. Բ. Բաղդասարյանը, աշխարհագրական գիտությունների դոկտոր Լ. Հ. Վալեսյանը և աշխարհագրական գիտությունների թեկնածուներ Ա. Ասլանյանն ու Ս. Մ. Դուլյանը։

Ռ. ՀՈՎԵՍՅԱՆ